

չափը կը պահէ . և միայն այս փակած կազին բարեխառնութեանը վրայ տպաւորած փոփոխութիւններովս է՝ որ իր վեր ելլելու կամ վար իջնալու շարժմունքները կը գործադրուին :

« Արդ , պարոնայք , իբր գործնական տեղեկութիւն , ահա այս կ'աւելցընեմ :

« Բոցարձարծին ծայրը այրած ջրածինը և թթուածինը , միայն ջրի գոլորշի կը շինէ : Ուստի երկաթէ գլանաձե արկղին ստորին մասին վրայ կափարչով պարպող խողովակ մը յարմարցուցած եմ , որ երկու մթնոլորտի ճռնշմար իր գործը կը կատարէ . ուստի հետևաբար՝ երբ այս չափը լցուի , գոլորշին կափարիչը բռնադատելով ինքնիրեն դուրս կը փախչի :

« Հիմա ահա ձեզի ճիշտ հաշիմներ տամ :

« 25 կալլոնաշափ ջրոյն կայացուցիչ տարեզը տարրալութելով երկու հարիւր լիտր թթուածին կ'ունենանք և քանուհինդ լիտր ջրածին : Այդ չափը՝ մթնոլորտի ձգտման , հազար ութ հարիւր իննըսուն խորանարդ ոտք ¹ առջի կազէն կը ներկայացընէ , և երեք հազար եօթը հարիւր ութսուն ոտք խորանարդ երկրորդէն , ընդ ամենը իբր խառնուրդ հինգ հազար վեց հարիւր եօթանասուն խորանարդ ոտք ² :

« Արդ իմ բոցարձարծիս ծորակը , ամբողջ բացուած որ ըլլայ , առ ժամ քսաննեօթը խորանարդ ³ ոտք կը վատնէ , անանկ մեծ բոց մը տարով որ առնուազն վեց անգամ աւելի է քան լուսաւորութեան մեծ կանթեղներուն բոցը : Միջին հաշուով ուրեմն , և որպէս զի այնչափ շատ բարձր չելլեմ , ինն խորանարդ ոտքէ աւելի չայրեմ պիտի առժամ ⁴ . իմ քսաննեհինդ կալլոնաշափ ջուրս՝ ինծի վեցհարիւր երեսուն ժամու օդային նաւարկութիւն կը ներկայացընէ , կամ քսաննեվեց օրէ քիչ մը աւելի :

« Ուստի , որովհետև ըստ կամս կը բ.

1 Եօթանասուն խորանարդ մեդր թթուածին :

2 Երկու հարիւր տասը մեդր խորանարդ :

3 Մէկ խորանարդ մեդր :

4 Մէկ երբորդ խորանարդ մեդրի :

նամ իջնալ և ճամբան ջրոյ պաշարս կրնամնորոգել , ճամբորդութիւնս կը բնայ անսահմանաբար շարունակիլ :

« Ահաւասիկ , պարոնայք , ինչպիսի է իմ զաղտնիքս . ինքնիրեն պարզ է , և իբր պարզ բան չիկրնար չյաջողիլ : Օդապարկին կազին ընդարձակումը և ամփոփումը , է իմ գործողութեանս միջոցը , որով ոչ նեղացուցիչ թևերու պէտք ունիմ և ոչ մեքենական ինչեցէ շարժիչ : Զերմաքեր մը՝ բարեխառնութեան փոփոխութիւնները պատճառող , բոցարձարծ մը՝ զայն ջերմացընող , այս ամենը ոչ նեղութիւն տուող են և ոչ ծանրութիւնմը կ'աւելցընեն : Ասով կարծեմ յաջողութեան բոլոր կարեոր պայմանները կրցեր եմ միաբանեցընել » :

Տոքոր Ֆէրկըսըն այս կերպով լմընցուց իր ճառախօսութիւնը , որուն ամենքը սրտանց ծափահարեցին : Զկար ամեննեին առարկութիւն մը ընելու . ամեն բան կանխաւ նախատեսեր ու լուծեր էր :

— Ի վերայ այսր ամենայնի , ըստ հրամանատարը , այդ բանը կրնայ վրտանգաւոր ըլլալ :

— Ի՞նչ կ'ըլլայ , պատասխանեց տոքորը պարզութեամբ մը , եթէ ատոր գործադրութիւնը կարելի է :

կը շարունակուի :

ԿՈՍՏԱՆՅԱՑԱՑ

Լգու Անթքան ՈՐՈՇՈՒԱԾ ՆԱԽԸ :


Շատ ատենուընէ 'ի վեր գաղղիոյ և Անգղիոյ ամենէն հոչակաւոր ճարտարապետները գլուխ կը ճաթեցընեն՝ որ ծովուն տակէն կամ ծովուն վրայէն՝ եղերքէ եղերք ուղղակի անցքի միջոց մը գտնեն երկաթուղեաց , առանց բռնադատուած ըլլալու անցքին համար բեռը շողեկառքէն հանելշոգենաւը բեռցընելու համար : Արդէն այս մտածութեանս վրայ ուրիշ յօդուածով խօսած ենք և մտածուած դաղափարին պատկերն ալ հրատարակած ենք : Այս անդամուն

կ'ուղենք յիշել սոյնպիսի վախճանի նի, մեծ արագութեամբ մը լճին լայնութիւնը կտրելով, որ զրեթէ երկու փառսախ է, կը փոխադրէ կը տանի առանց դժուարութեան միւս ափանց երկաթրութեանց հետ սահմանակից է: Այս դիւտըս նաւ մըն է՝ որ երկու տէրութեանց համաձայնութեամբը շինուած է, ջուիցերի և վիրդէմպէրկի, և կ'ըսուի նաւ անցից: Այս նաւին ըրած ծառայութիւնն է վաճառաց փոխադրութիւնը շարունակել, վիրդէմպէրկի հիւսիսային արևելեան երկաթուղիէն առնելով, որ ֆրէտէրիքսչափըն կը լմիննայ, և Ռամանշուն տանելով, ուր ջուիցերի երկաթուղին կը սկըսի. և այս ամենը՝ առանց կառք մը պարպելու:

Այս նաւը Սքոդ Բլանել անգղիացի ճարտարապետին տուած գաղափարին համեմատ շինուեցաւ, որ զերէդ իսդէրն շինողն է: Այս անցից նաւը թերես կրնայ առ հասարակ Գաղղիացւոց և Անգղիացւոց օրինակ ծառայել՝ իբր միջոց Մանիքայի ջրանցքին անցքը դիւրացընելու, որ աւելի պարզ և զիւրին է՝ քան թէ օդու միջէն ձգուած կամուրջ մը, կամ ծովուն տակէն թիւննէլ մը:

Նաւը՝ ափանց երկաթուղիէն՝ ուղղակի տամնուչորս կամ տամնուհինդ բեռնաւորեալ կառաց խումբ մը կ'ընդու-

թիւնը կտրելով, որ զրեթէ երկու փառսախ է, կը փոխադրէ կը տանի առանց դժուարութեան միւս ափանց երկաթ-



ԿՈՍՏԱՆԱՑ ԼՃԻՆ Ա

ուղւոյն վրայ կ'անցունէ, ուսկից իրենց ճամբան կը շարունակեն:

Քալէէն առ ջուվր անցքին համար այս նաւը՝ փոքրաշէն նաւու մը գաղա-


գար է . սակայն կոստանցայի լճին համար՝ լեւիաթան մըն է : 245 ոտք երկայ նութիւն ունի և 64 լայնութիւն : իր բարձրութիւնը 30 ոտք է , ուսկից նաւա-

րեն . նաւը դարձուելու կարօտութիւն չունի . բայց եթէ դարձընել ալ պէտք ըլլայ՝ գիւրին է զայն՝ ի գործ դնել : Երկու անիւները , որ քսանուհինգ ոտք տրամագիծ ունին , և իւրաքանչիւրը քսանեւ չորս գօրաւոր թեեւ բով զինուած են , անկախ մէկմէկէ կը շարժին , և զանոնիք շարժող մէքենայն հարիւր ձիու ուժ ունի : Մասնաւոր գործիներ կան՝ որ ցամաքի երկաթուղոյն ձողերը նաւուն ձողերուն հետ կը կապեն և նաւուն այն հակումը կուտան՝ որ գիւրին ըլլայ կառքերը ընդունիլ և երկաթուղոյն անցունել :

Ս' եր հոս ներկայացուցած պատկերքին վրայ նայողը՝ ըսածներնուս որոշ գաղափար մը կրնայ ունենալ :

Շ Ի Բ Ա Զ ՍԱՍՏԻ ԵՒ ՀԱՅՐՁ

Շիրազ՝ Ֆարսի մայրաքաղաքն՝ միշտ Պարսկաստանի յառաջադէմ և կարեւոր քաղաքներէն մէկն սեպուած է , և ճարտարարուեստից մէջ ալ ամենէն յառաջադէմներէն մէկն է . իր բերքերուն մէջ



Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Ա Ծ Ն Ա Խ Բ :

պետք երկք ձայնատու խոլովակներով իր մարդիկներուն հրամանները կը հաղորդէ : Նաև երկու զեկունի՝ որ նոյն տափարակ բարձրութենէն կը կառավա-

աւելի համբաւ ստացած են զէնքերն : Բռնաւոր Քէրիմ-խանի թագաւորութեանը ժամանակ՝ տէրութեան ընդհանուր մոյրաքաղաքն էր և ոչ շատ